

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՐ

Լոս Անջելես քաղաքի բնակտեղավորման մարմինը (The Housing Authority of the City of Los Angeles) («HACLA») ծանուցում է տրամադրում մի միջադեպի մասին, որը կարող է ազդել անձնական տեղեկությունների գաղտնիության վրա: Այս ծանուցումը ներկայացնում է միջադեպի մանրամասները, մեր արձագանքը և ձեզ հասանելի ռեսուրսները, որոնք կօգնեն պաշտպանել ձեր տեղեկությունները հնարավոր չարաշահումից, եթե դուք նպատակահարմար գտնեք դա անել:

Ի՞նչ է տեղի ունեցել: 2022թ. դեկտեմբերի 31-ին HACLA-ն որոշ համակարգչային համակարգերում գաղտնագրված ֆայլեր է հայտնաբերել: HACLA-ն իմացել է, որ դարձել է բարդ կիրերհարձակման գոհ: HACLA-ն անմիջապես անջատել է իր սերվերները և երրորդ կողմի քրեագետների օգնությամբ հետաքննություն է սկսել՝ պարզելու համար միջադեպի բնույթն ու ծավալը: Քրեագետների հետաքննությունը պարզեց, որ 2022թ. հունվարի 15-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում չարտոնված մուտք է եղել դեպի որոշակի սերվերներ: HACLA-ն անմիջապես համակողմանի քննություն է ձեռնարկել իր համակարգերում պարունակվող բոլոր տվյալների, որոնք կարող էին լինել որևէ չարտոնված մուտքի կամ ձեռքբերման առարկա: 2023թ. փետրվարի 13-ին HACLA-ն ավարտեց այս քննությունը և պարզեց, որ հարձակման ենթարկված սերվերներում պարունակվում էին որոշ անձնական տեղեկություններ:

Ի՞նչ տեղեկություններ էին ներառված: Թեև տվյալների յուրահատուկ տարրերը տարբեր են յուրաքանչյուր հնարավոր ազդեցության տակ գտնվող անհատի համար, հնարավոր ազդեցության տակ եղած տեղեկությունների շրջանակը ներառում է անհատի անունը, Սոցիալական ապահովության համար, ծննդյան ամսաթիվ, անձնագրի համար, վարորդական իրավունքի համար կամ պետական նույնականացման համար, հարկ վճարողի նույնականացման համար, զինվորական նույնականացման համար, պետության կողմից տրված նույնականացման համար, վարկային/դեբետային քարտի համար, ֆինանսական հաշվեհամար, բժշկական ապահովագրության մասին տեղեկություններ, առողջական վիճակի մասին տեղեկություններ:

Ի՞նչ ենք մենք անում: HACLA-ն փոստով ծանուցման նամակներ է ուղարկել այն անհատներին, որոնց համար նա ունի վավեր փոստային հասցեներ, որոնց պաշտպանված տեղեկությունները պարունակվել են հնարավոր ազդեցության տակ գտնվող ֆայլերում: HACLA-ն լրջորեն է վերաբերվում իր տրամադրության տակ գտնվող տեղեկությունների գաղտնիությանը, անձեռնմխելիությանը և անվտանգությանը: Միջադեպի հայտնաբերումից հետո, HACLA-ն անմիջապես հետաքննություն է ձեռնարկել՝ դեպքի բնույթն ու ծավալը հաստատելու համար: HACLA-ն այս միջադեպի մասին հայտնել է տեղական, նահանգային և դաշնային իրավապահ գործակալություններին: Ավելին, HACLA-ն քայլեր է ձեռնարկում հավելյալ պաշտպանական միջոցներ ներդնելու համար և վերանայում է տվյալների անձեռնմխելիությանը և պաշտպանությանը վերաբերող քաղաքականությունները և գործընթացները:

Ի՞նչ կարող եք դուք անել: Դուք կարող եք ծանոթանալ ստորև բերված «Քայլեր, որոնք դուք կարող եք ձեռնարկել անձնական տեղեկությունների պաշտպանությանն օգնելու համար» բաժնի հետ: Մենք նաև հորդորում ենք ձեզ պահպանել զգոնություն ինքնությունը բացահայտող տվյալների գողության և խարդախության դեպքերի հանդեպ, ստուգել ձեր բանկային հաշվի քաղվածքները և վարկային հաշվետվությունները՝ կասկածելի ակտիվության առումով:

Հավելյալ տեղեկությունների համար: Մենք հասկանում ենք, որ ձեզ մոտ կարող են հարցեր լինել այս դեպքի մասին, որոնց չենք անդրադարձել այս նամակում: Եթե լրացուցիչ հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել մեզ հատուկ տրամադրված աջակցության գծին հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-459-4196 Երկուշաբթիից – Ուրբաթ՝ 6:00am-ից 8:00pm PT, Շաբաթ և Կիրակի՝ 8:00am-ից 5:00pm PT: Դուք նաև կարող եք նամակ գրել HACLA-ին՝ Attention: Incident Response, 2600 Wilshire Blvd., Los Angeles, CA 90057

HACLA-ն լրջորեն է վերաբերվում իր տրամադրության տակ գտնվող տեղեկությունների անձեռնմխելիությանը և անվտանգությանը: Մենք անկեղծորեն ցավում ենք ցանկացած անհարմարության կամ մտահոգության համար, որ այս միջադեպը կարող է առաջացնել ձեզ մոտ:

ՔԱՅԼԵՐ, ՈՐՈՆՔ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

Վերահսկեք ձեր հաշիվները

Համաձայն ԱՄՆ օրենսդրության՝ սպառողը տարեկան մեկ անգամ վարկային հաշվետվության յուրաքանչյուր երեք հիմնական բյուրոներից՝ Equifax-ից, Experian-ից և TransUnion-ից անվճար վարկային հաշվետվության իրավունք ունի: Ձեր անվճար վարկային հաշվետվությունը պատվիրելու համար, այցելեք՝ www.annualcreditreport.com կայքէջ կամ զանգահարեք 1-877-322-8228 անվճար հեռախոսահամարով: Ձեր վարկային զեկույցի անվճար օրինակը պահանջելու համար կարող եք նաև ուղղակիորեն կապվել ստորև թվարկված վարկային հաշվետվության երեք հիմնական բյուրոների հետ:

Սպառողներն իրավունք ունեն վարկային գործի վրա անվճար նախնական կամ երկարաձգված «խարդախության ահազանգ» նշում կատարել: Խարդախության վերաբերյալ նախնական ահազանգը մեկ տարվա նախազգուշացում է, որը դրվում է սպառողի վարկային գործի վրա: Սպառողի վարկային գործի վրա խարդախության ահազանգ տեսնելուց հետո բիզնեսը պետք է նախքան նոր վարկի երկարացումը քայլեր ձեռնարկի հաստատելու համար սպառողի ինքնությունը: Եթե դուք ինքնությունը բացահայտող տվյալների գողության զոհ եք, դուք իրավասու եք խարդախության երկարաձգված նախազուշացում կատարելու, որը յոթ տարի տևողությամբ խարդախության նախազգուշացում է: Խարդախության ահազանգ տալու ցանկության դեպքում խնդրում ենք կապվել ստորև նշված վարկային հաշվետվությունների երեք հիմնական բյուրոներից մեկի հետ:

Որպես խարդախության ահազանգի այլընտրանք՝ սպառողներն իրավունք ունեն վարկի հաշվետվության վրա նշել «վարկի սառեցում», ինչը կարգելի վարկային բյուրոյին վարկային հաշվետվություններ հրապարակել առանց սպառողի լիազորման: Վարկի սառեցումը նախատեսված է ձեր անունով վարկի, փոխառությունների և ծառայությունների հաստատումն առանց ձեր համաձայնության Միևնույն ժամանակ, դուք պետք է տեղյակ լինեք, որ ձեր վարկային հաշվետվությունում անձնական և ֆինանսական տեղեկատվության հասանելիությունը վերահսկելու համար վարկի սառեցում օգտագործելը կարող է հետաձգել, խանգարել կամ արգելել ձեր կատարած ցանկացած հետագա պահանջի կամ դիմումի ժամանակին հաստատելը, որոնք դուք անում եք կապված նոր փոխառության, վարկի, հիփոթեքի կամ որևէ այլ հաշվի հետ, ինչը ներառում է վարկի երկարաձգում: Դաշնային օրենսդրության համաձայն, ձեզ չի կարելի մեղադրել ձեր վարկային հաշվետվությունում վարկի սառեցում տեղադրելու կամ հանելու կապակցությամբ: Վարկի սառեցում պահանջելու համար ձեզանից կպահանջվի տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ամբողջական անունը (ներառյալ միջին անվան սկզբնատառը, ինչպես նաև Jr., Sr., II, III, և այլ նշումները),
2. Սոցիալական ապահովության համարը,
3. Ծննդյան օրը,
4. Վերջին երկուսից հինգ տարիների բնակության հասցեները,

5. Ներկայիս հասցեի ապացույցը, ինչպես, օրինակ՝ կոմունալ ծախսերի կամ հեռախոսի վճարման կտրոնը,
6. Կառավարության կողմից ձեռք տրված նույնականացման քարտի (պետական վարորդական իրավունքի կամ ID քարտի և այլն) ընթեռնելի լուսապատճենը, և
7. Ինքնությունը բացահայտող տվյալների գողության կապակցությամբ ոստիկանական զեկույցի, կամ հետաքննության զեկույցի կամ իրավապահ մարմին ներկայացրած բողոքի պատճենը, որ դուք ինքնությունը բացահայտող տվյալների գողության գոհ եք:

Վարկի սառեցում պահանջելու ցանկության դեպքում, խնդրում ենք կապվել ստորև թվարկված վարկային հաշվետվությունների երեք հիմնական բյուրոների հետ.

Equifax	Experian	TransUnion
https://www.equifax.com/personal/credit-report-services/	https://www.experian.com/help/	https://www.transunion.com/credit-help
1-888-298-0045	1-888-397-3742	1-800-916-8800
Equifax Fraud Alert, P.O. Box 105069 Atlanta, GA 30348-5069	Experian Fraud Alert, P.O. Box 9554, Allen, TX 75013	TransUnion Fraud Alert, P.O. Box 2000, Chester, PA 19016
Equifax Credit Freeze, P.O. Box 105788 Atlanta, GA 30348-5788	Experian Credit Freeze, P.O. Box 9554, Allen, TX 75013	TransUnion Credit Freeze, P.O. Box 160, Woodlyn, PA 19094

Լրացուցիչ տեղեկություններ

Դուք հետագայում, կապվելով սպառողների հաշվետվությունների բյուրոների, Առևտրի դաշնային հանձնաժողովի կամ ձեր նահանգի Գլխավոր դատախազի հետ՝ կարող եք ավելին իմանալ ինքնությունը բացահայտող տվյալների գողության, խարդախության ահազանգի, վարկի սառեցման և այն քայլերի վերաբերյալ, որոնք դուք կարող եք ձեռնարկել՝ պաշտպանելու համար ձեր անձնական տեղեկությունները: Առևտրի դաշնային հանձնաժողովի հետ կարելի է կապվել հետևյալ հասցեով՝ 600 Pennsylvania Avenue NW, Washington, DC 20580; www.identitytheft.gov, 1-877-ID-THEFT (1-877-438-4338) հեռախոսահամարով, և TTY՝ 1-866-653-4261 հեռախոսահամարով: Առևտրի դաշնային հանձնաժողովը նաև խրախուսում է բողոք ներկայացնել այն մարդկանց, ովքեր պարզել են, որ իրենց տեղեկությունները չարաշահվել են: Կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ այն մասին, թե ինչպես կարելի է նման բողոք ներկայացնել վերը թվարկված կոնտակտային տվյալների օգտագործմամբ: Դուք իրավունք ունեք ոստիկանությանը հաղորդում ներկայացնել, եթե երբևէ ինքնությունը բացահայտող տվյալների գողություն կամ խարդախություն եք նկատել: Խնդրում ենք նկատի ունենալ, որ իրավապահ մարմիններին ինքնությունը բացահայտող տվյալների գողության մասին հաղորդում ներկայացնելու համար, հնարավոր է, որ անհրաժեշտ լինի որոշ ապացույցներ ներկայացնել առ այն, որ դուք տուժող եք: Ինքնությունը բացահայտող տվյալների հայտնի կամ կասկածելի գողության դեպքերի մասին պետք է հայտնել իրավապահ մարմիններին և ձեր նահանգի Գլխավոր դատախազին: Այս ծանուցումը չի ձգձգվել իրավապահ մարմինների կողմից:

Կալիֆորնիայի բնակիչների համար. Այցելեք Անձնական կյանքի գաղտնիության պաշտպանության Կալիֆորնիայի գրասենյակը (www.oag.ca.gov/privacy) ինքնությունը բացահայտող տվյալների գողությունից պաշտպանվելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Մասսաչուսեթսի բնակիչների համար. Համաձայն Մասսաչուսեթսի օրենքի՝ դուք իրավունք ունեք ստանալ ցանկացած ոստիկանական զեկույց, որը ներկայացվել է այս միջադեպի կապակցությամբ: Եթե դուք ինքնությունը բացահայտող տվյալների գողության գոհ եք, դուք նաև իրավունք ունեք ոստիկանություն հաղորդում ներկայացնել և ստանալ դրա օրինակը:

Կոլումբիա շրջանի բնակիչների համար. Կոլումբիա շրջանի Գլխավոր դատախազի հետ կարելի է կապվել հետևյալ հասցեով՝ 400 6th Street, NW, Washington, DC 20001, 202-727-3400, և www.oag.dc.gov կայքով:

Մերիլենդի բնակիչների համար. Մերիլենդի Գլխավոր դատախազի հետ կարելի է կապվել հետևյալ հասցեով՝ 200 St. Paul Place, 16th Floor, Baltimore, MD 21202, 1-410-528-8662 կամ 1-888-743-0023 հեռախոսահամարներով, և www.oag.state.md.us կայքով:

Նյու Մեքսիկոյի բնակիչների համար. համաձայն Վարկային ճշգրիտ հաշվետվության մասին օրենքի՝ դուք ունեք իրավունքներ, ինչպես, օրինակ՝ տեղյակ լինելու՝ արդյոք ձեր վարկային գործում պարունակվող տեղեկություններն օգտագործվել են ձեր դեմ, իմանալու, թե ինչ կա ձեր վարկային գործում, խնդրել, որ ձեզ հայտնեն ձեր վարկային միավորը, և վիճարկել թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկությունները: Ավելին, համաձայն Վարկային ճշգրիտ հաշվետվության մասին օրենքի՝ սպառողի հաշվետվության բյուրոները պետք է շտկեն կամ ջնջեն ոչ ճշգրիտ, թերի կամ չստուգվող տեղեկությունները, սպառողի հաշվետվության գործակալությունները չպետք է հնացած, բացասական տեղեկություններ հայտնեն, ձեր վարկային գործի հասանելիությունը սահմանափակ է, դուք պետք է ձեր համաձայնությունը տաք, որ ձեր վարկային հաշվետվությունները տրամադրվեն գործատուներին, դուք կարող եք սահմանափակել վարկերի և ապահովագրությունների «նախնական» առաջարկները, որոնք դուք ստանում եք ձեր վարկային հաշվետվության մեջ պարունակվող տեղեկությունների հիման վրա, և դուք կարող եք խախտողից վնասի հատուցում ակնկալել: Դուք Վարկային ճշգրիտ հաշվետվության մասին օրենքի ներքո կարող եք ունենալ հավելյալ իրավունքներ, որոնք թվարկված չեն այստեղ: Ինքնությունը բացահայտող տվյալների գոյության գոհերը և ակտիվ զինձառայության մեջ գտնվողները հավելյալ իրավունքներ ունեն՝ համաձայն Վարկային ճշգրիտ հաշվետվության մասին օրենքի: Մենք ձեզ հորդորում ենք ծանոթանալ Վարկային ճշգրիտ հաշվետվության մասին օրենքի ներքո ձեր իրավունքներին՝ այցելելով http://www.consumerfinance.gov/f/201504_cfbp_summary_your-rights-under-fcra.pdf կայքը, կամ գրելով հետևյալ հասցեով՝ Consumer Response Center, Room 130-A, Federal Trade Commission, 600 Pennsylvania Ave. N.W., Washington, D.C. 20580

Նյու Յորքի բնակիչների համար. Նյու Յորքի Գլխավոր դատախազի հետ կարելի է կապվել հետևյալ հասցեով՝ Office of the Attorney General, The Capitol, Albany, NY 12224-0341, 1-800-771-7755 հեռախոսահամարով կամ <https://ag.ny.gov/> կայքով:

Հյուսիսային Կարոլինայի բնակիչների համար. Գլխավոր դատախազի հետ կարելի է կապվել հետևյալ հասցեով՝ 9001 Mail Service Center, Raleigh, NC 27699-9001, 1-877-566-7226 կամ 1-919-716-6000 հեռախոսահամարներով, և www.ncdoj.gov կայքով:

Ռոդ Այլենդի բնակիչներ համար. Ռոդ Այլենդի Գլխավոր դատախազի հետ կարելի է կապվել հետևյալ հասցեով՝ 150 South Main Street, Providence, RI 02903, www.riag.ri.gov, և 1-401-274-4400 հեռախոսահամարով: Ռոդ Այլենդի օրենքի ներքո՝ դուք իրավունք ունեք ստանալ ցանկացած ոստիկանական զեկուլյց, որը ներկայացվել է այս միջադեպի կապակցությամբ: